Արձանագրություն N 2
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» փետրվարի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մեսրոպյանը, Ա. Պապյանը ,
Լ. Հարությունյան, Լ. Ոսկանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

<u>Ի. գնանշման հարցում ընթացակարգի հայտերի բացման մասին</u>
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	<<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս Էլ. փոստ. info@haldi.am
2	<<Արմստրոյ>> ՍՊԸ	ք.Երևան, Թումանյան 32/1 Էլ. փոստ. armshinltd@mail.ru
3	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Սաֆարյան 3 նրբ. Տուն 8 Էլ. փոստ. hamashin@mail.ru
4	<<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ և <<Դուստր Մարգարիտա>> ՍՊԸ /կոնսորցիում/	Ե, Չարենցի, Փ 2 Էլ. փոստ. info@seimshin.am
5	«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ	ԼՂՀ, ք Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա, բն. 23 Էլ. փոստ. artsakhroad@gmail.com
6	<<Տրանսնախագիծ>> ՓԲԸ	ք. Երևան, Դ. Անհաղթի 23 transproject@mail.ru

բ) մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով ներկայացված է կից աղյուսակով:

գ) հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

<u>2. գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման մասին</u>
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում է՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

բ) չի համապատասխանում՝ <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի, <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ի, <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի և <<Դուստր Մարգարիտա>> ՍՊԸ-ի /կոնսորցիում/, <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ի և <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

- <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը ստորագրված չէ տնօրենի կողմից, ինչպես նաև հայտով ներկայացված լիցենզիան չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության» հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաներին, իսկ <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները:

- <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ն, <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ն և <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ն և <<Դուստր Մարգարիտա>> ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ներկայացրել են 04.02.2019թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի «Լիցենզավորման կենտրոն» գործակալության կողմից տրված գրությունները, որի համաձայն կազմակերպությունների կողմից ներկայացված լիցենզավորման հայտերը քննարկվել են ՀՀ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 1-ի նիստի ժամանակ և տրվել են դրական եզրակացություններ: Լիցենզիաների ներդիրները կարող են ստանալ «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունից:

2. Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի և <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետը որոշեց.

ա) նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով,

բ) անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 06.02.2019թ. թիվ 05/15.3/1394-19 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ուղղված հարցումը «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի, <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ի, <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի լիցենզիաների շրջանակներում գործունեություն ծավալելու մասին, որոշեց սպասել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

_____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

Քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան